

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Գագիկ Մինասյանի, Արծվիկ Մինասյանի, Սամվել Նիկոյանի, Հրանտ Բազրատյանի, Խոսրով Հարությունյանի, Սուքիաս Ավետիսյանի և Միեր Շահգեղյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-646-21.10.2014-ՖՎ-010/0, Պ-646¹-21.10.2014-ՖՎ-010/0 և Պ-646²-21.10.2014-ՖՎ-010/0) վերաբերյալ:

I. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

1. Օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված են դրույթներ, որոնց համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի լիազորությունների արդյունավետ

իրականացման համար և պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին, պատգամավորական խմբերին մասնագիտական աջակցություն ու տեղեկատվություն տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում կազմավորվում է փորձագետների աշխատանքային խումբ (այսուհետ՝ բյուջետային գրասենյակ): Այս առումով գտնում ենք, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի և դրան կից հավելվածների բովանդակային վերլուծությունից պարզ չէ բյուջետային գրասենյակի, ինչպես նաև նրա փորձագետների իրավական կարգավիճակը:

Ըստ օրենքի նախագծի՝ բյուջետային գրասենյակն ինքնավար է ու անկախ պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար և այլ անձանցից: Ըստ այդմ բյուջետային գրասենյակին վերապահված են այնպիսի լիազորություններ, որոնք բնորոշ են ինքնուրույն գործող մարմին: Բյուջետային գրասենյակն երկու ուղղությամբ իրականացնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման և գանձապետական հաշիվների մշտադիտարկում, սակայն սույն օրենքի իմաստով պարզ չէ մշտադիտարկման բովանդակությունը՝ ինչ տեղեկատվություն է պահանջվում պետական կառավարման լիազոր մարմիններից:

Բյուջետային գրասենյակի մշտադիտարկման վերաբերյալ դրույթը, ինչպես նաև բյուջետային գրասենյակի անկախության և պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց, հիմնարկներին և կազմակերպություններին անմիջական դիմելու իրավունքը, այդ մարմինների՝ 20-օրյա ժամկետում գրասենյակին պատասխանելու պարտավորության համակցված մեկնաբանությունը թույլ են տալիս բյուջետային գրասենյակի կարգավիճակը համեմատել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հանձնաժողովի կարգավիճակի հետ:

Այս դեպքում խոսքը կարող է վերաբերել ոչ թե Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն սպասարկող մարմին, այլ իրական ինքնավար ու անկախ մարմին: Դրա օգտին է վկայում փորձագետների աշխատավարձերի մեծության համեմատականությունը պետական կառավարման համակարգի աշխատողների աշխատավարձերի հետ: Իսկ եթե ենթադրենք, որ բյուջետային գրասենյակը գործելու է միայն պատգամավորների միջոցով, ապա ինչպես պետք է հասկանալ այդ մարմնի ինքնավարությունը և անկախությունը: Հարկ է նկատի ունենալ նաև այն, որ պատգամավորներն առանց այդ էլ իրավունք ունեն դիմելու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարներին ու պաշտոնատար անձանց, որոնց պատասխանելու պարտականության ժամկետը ևս 20 օր է:

Ուստի, բյուջետային գրասենյակի մշտադիտարկման իրականացման և պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարներին ու պաշտոնատար անձանց դիմելու գործառույթը հիմնավորված չէ:

Օրենքի նախագծին կից ներկայացված 2-րդ հավելվածի 1-ին կետի համաձայն՝ բյուջետային գրասենյակի փորձագետներն աշխատանքի են ընդունվում նույն հավելվածով սահմանված կարգով՝ որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրով՝ մինչև տվյալ գումարման Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտը: Հետևաբար, խոսքը ժամանակավոր հիմունքներով աշխատանքի ընդունվող փորձագետների մասին է: Մինչդեռ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի նշված հավելվածի 4-րդ կետի համաձայն՝ բյուջետային գրասենյակի փորձագետների հաստիքները ներառվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի հաստիքացուցակում: Ասվածից հետևում է, որ բյուջետային գրասենյակի փորձագետները, որոնց հետ աշխատանքային պայմանագրերը կնքվում են մինչև տվյալ գումարման Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտը, նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված աշխատողներ են: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի հաստիքացուցակում ընդգրկված փորձագետների աշխատանքային գործունեության հետ կապված հարաբերություններն անհրաժեշտ է կարգավորել «Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Միաժամանակ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի «ժե²» ենթակետով նախատեսված դրույթների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի առաջարկությամբ, հասարակական կամ պայմանագրային հիմունքներով հրավիրում է փորձագետ (մասնագետ): Այստեղից պարզ է, որ նշված դրույթները ոչ միայն չեն հստակեցնում բյուջետային գրասենյակի փորձագետների իրավական կարգավիճակը, այլև միայն անդրադառնում են նրանց աշխատանքային իրավահարաբերությունների ծագման հիմքին:

Հինք ընդունելով նշվածը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է հստակեցնել և խմբագրել օրենքի նախագծի այն դրույթները, որոնք վերաբերում են բյուջետային գրասենյակի փորձագետների իրավական կարգավիճակին:

2. Առաջարկում ենք հանել օրենքի նախագծի 6-րդ հոդվածը, քանի որ դրանով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից խմբագրված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվող ամփո-

փաթերթիկը պետք է պարունակի տեղեկատվություն ընդունված առաջարկության՝ ըստ «ծախսերի բյուջետային դասակարգման համապատասխան հոդվածի և բյուջեի նախագծի աղյուսակի համարի», մասին պահանջը ոչ բոլոր դեպքերում է կիրառելի (հատկապես՝ տեխնիկապես իրականացնելու տեսանկյունից), և այդ առումով գործող օրենքի 80-րդ հոդվածի 4-րդ կետի «դ» ենթակետով ամփոփաթերթիկում նշվող տեղեկատվության նկատմամբ սահմանված պահանջն («Առաջարկության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը») արդեն իսկ ենթադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ամփոփաթերթիկում ընկալման համար առավել ընդունելի եղանակով անհրաժեշտ տեղեկատվություն ներկայացնելը:

3. Օրենքի նախագծի 1-ին հավելվածով ներկայացված փորձագետների աշխատանքային խմբի (բյուջետային գրասենյակի) կանոնակարգի՝

1) 15-րդ կետի «գ» ենթակետի «ներպետական» բառն առաջարկում ենք փոխարինել «պետական» բառով.

2) 31-րդ կետի 2-րդ ենթակետի «նիստում» բառից հետո առաջարկում ենք կետը լրացնել «պետական» բառով:

4. Օրենքի նախագծի 2-րդ հավելվածով ներկայացված բյուջետային գրասենյակի փորձագետներին ներկայացվող պահանջների, նրանց ընտրության (նշանակման) կարգի ու վարձատրության չափի վերաբերյալ՝

1) նշված հավելվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի «բ» ենթակետերից առաջարկում ենք հանել «համայնքային» բառը.

2) նշված հավելվածի 16-րդ կետով սահմանվող բյուջետային գրասենյակի փորձագետների վարձատրության առաջարկված չափը հիմնավորման կարիք ունի: Նախագծով ներկայացված դրույքաչափերի և 2015 թվականի համար նախատեսվող՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի գումարի կիրառմամբ բյուջետային գրասենյակի փորձագետների աշխատավարձի գծով 2015 թվականի տարեկան ծախսը կկազմի շուրջ 27 մլն դրամ:

II. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունենք:

III. «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

1. Առաջարկում ենք 2-րդ հոդվածում «մասին» բառը փոխարինել «մասի» բառով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը լրամշակման կարիք ունի և իր պատրաստականությունն է հայտնում նախագծի հեղինակներին՝ համագործակցելու ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի լրամշակման գործում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Պավել Սաֆարյանը:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության
բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
և լրացում կատարելու մասին» և «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի
փաթեթի ընդունման դեպքում**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության
բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վերահսկիչ պալատի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք-
ների նախագծերի փաթեթի ընդունումն առողջապահության բնագավառի վրա
ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփո-
խություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության
բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վերահսկիչ պալատի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության
բնագավառում կարգավորման**

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) նախատեսվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ հստակեցվում են փորձագետների աշխատանքային խմբին (բյուջետային գրասենյակին) ներկայացվող պահանջները, նրանց ընտրության (նշանակման) կարգը, պաշտոնավարման պայմանները, ինչպես նաև փոփոխվում են ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքում ընթացիկ հաշվետվության կազմման և վերահսկիչ պալատի կողմից դրա հաստատման կատարման ժամկետները:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի Նախագծերի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱԿԱԿՈՌՈՒԴՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ: Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *ամրագրվում են դրույթներ բյուջեի եռամսյակային կտրարման տեղեկատվության ներկայացման, ՀՀ վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվությունների և հայտնաբերված խախտումների վերացմանն ուղղված վերահսկվող օբյեկտի պաշտոնապար անձանց ներկայացրած տեղեկանքների քննարկումների, ինչպես նաև բյուջեի գրասենյակի ստեղծման վերաբերյալ* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվում:**

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վերահսկիչ պալատի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վերահսկիչ պալատի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

1. «Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեում կառաջացնի շուրջ 26.7 մլն դրամի չափով լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն, պայմանավորված սույն օրենքի նախագծի 2-րդ հավելվածի 4-րդ գլխի 16-րդ հոդվածով սահմանվող բյուջետային գրասենյակի փորձագետների վարձատրության չափով, իսկ գրասենյակի պահպանման համար մնացած ծախսերի վերաբերյալ առաջարկություն հնարավոր չէ ներկայացնել համապատասխան տվյալների բացակայության պատճառով:

Նշված օրենքի նախագծի թե ընդունումը, թե չընդունումը ՀՀ պետական բյուջեի մուտքերի, համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխման չեն հանգեցնում:

2. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի թե ընդունումը, թե չընդունումը ՀՀ պետական բյուջեի, ՀՀ համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխման չեն հանգեցնում:

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ի կետի «բ» ենթակետում «հարցումը» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ Բյուջետային գրասենյակի միջոցով ներկայացված,» բառերը:

Հոդված 2. Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 23. Ենթահանձնաժողովի, աշխատանքային խմբի եւ փորձագետների աշխատանքային խմբի (բյուջետային գրասենյակ) ստղծումն ու գործունեությունը

1. Մշտական հանձնաժողովը կարող է իր կազմից ստեղծել ենթահանձնաժողովներ, ինչպես նաեւ ձեւավորել աշխատանքային խմբեր՝ սահմանելով դրանց խնդիրները, գործունեության ժամկետներն ու կարգը եւ ընտրելով դրանց ղեկավարներին:

2. Մշտական հանձնաժողովի կողմից ստեղծված աշխատանքային խմբի կազմում կարող են ընդգրկվել պատգամավորը, ինչպես նաեւ հանձնաժողովի, խմբակցության, պատգամավորական խմբի փորձագետը (մասնագետը), պատգամավորի օգնականը եւ այլ մասնագետներ:

3. Մշտական հանձնաժողովի կողմից ստեղծված ենթահանձնաժողովի կամ աշխատանքային խմբի ղեկավարը կատարում է մշտական հանձնաժողովի նախագահի հանձնարարականները:

4. Իր գործունեության արդյունքների մասին մշտական հանձնաժողովի կողմից ստեղծված ենթահանձնաժողովը կամ աշխատանքային խումբը սահմանված ժամկետում զեկուցում է մշտական հանձնաժողովի նիստում:

5. Մշտական հանձնաժողովի կողմից ստեղծված ենթահանձնաժողովը կամ աշխատանքային խումբը կարող է լուծարվել վաղաժամկետ՝ մշտական հանձնաժողովի որոշմամբ:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 77-րդ հոդվածով Ազգային ժողովին վերապահված վերահսկողական լիազորությունների, ինչպես նաեւ սույն օրենքի 10-րդ, 11-րդ գլուխներով եւ 101-րդ հոդվածով սահմանված դրույթների արդյունավետ իրականացմանը նպաստելու եւ պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին, պատգամավորական խմբերին մասնագիտական աջակցություն ու տեղեկատվություն տրամադրելու համար Ազգային ժողովում կազմավորվում է փորձագետների աշխատանքային խումբ (այսուհետ՝ Բյուջետային գրասենյակ):

7. Բյուջետային գրասենյակի գործառույթներն են՝

1) պետական բյուջեի նախագծում, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում բյուջետային մուտքերը եւ ելքերը ծրագրային եւ/ կամ այլ ձեւաչափով ներկայացված փաստաթղթի վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը.

2) ծրագրային բյուջետավորման ձեւաչափի վերաբերյալ դասընթացների կազմակերպումը.

3) պետական բյուջեի նախագծի ամփոփ նկարագրի պատրաստումը, ինչպես նաեւ ճյուղային, ծրագրային, ոլորտային ամփոփ նկարագրերի եւ տեղեկանքների պատրաստումը.

4) պետական բյուջեի նախագծում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունների ձեւակերպմանն աջակցությունը՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելով հաշվարկներ.

5) պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով պետական բյուջեի կատարման, գանձապետական հաշիվների մշտադիտարկումը, այդ թվում՝ առցանց.

6) տեղեկանքներ պետական բյուջեի եկամուտների (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների), ինչպես նաեւ պետական բյուջեով հատկացվող, հատկացված միջոցների (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների) ծախսման վերաբերյալ.

7) Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը, Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների

աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի, այդ թվում՝ պետական բյուջեի վրա վարկերի սպասարկման ազդեցության եւ Հայաստանի Հանրապետությանն օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաեւ այլ անձանց կողմից տրամադրված դրամաշնորհների վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը.

8) պետական բյուջեի կատարման վերաբերյալ հարցերի, հարցումների եւ հարցապնդումների ձեւակերպմանը աջակցությունը.

9) պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ամփոփ նկարագրի, ինչպես նաեւ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ճյուղային, ծրագրային, ոլորտային ամփոփ նկարագրերի եւ տեղեկանքների պատրաստումը.

10) պետական բյուջեի կատարման (եռամսյակային) ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագրի պատրաստումը.

11) վերահսկիչ պալատի տարեկան, ընթացիկ հաշվետվությունների եւ եզրակացությունների վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը.

12) իր կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ եռամսյակային եւ տարեկան հաշվետվությունների ներկայացումն Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովին: Տարեկան հաշվետվությունը տեղադրվում է Բյուջետային գրասենյակի ինտերնետային էջում:

8. Բյուջետային գրասենյակը, իր գործառույթների շրջանակներում, պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին, պատգամավորական խմբերին՝ նրանց գրավոր հարցման հիման վրա, ինչպես նաեւ սույն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով, տրամադրում է մասնագիտական աջակցություն եւ տեղեկատվություն:

9. Բյուջետային գրասենյակի կանոնակարգը, փորձագետներին ներկայացվող պահանջները, նրանց ընտրության (նշանակման) կարգը, պաշտոնավարման պայմանները, ժամկետը, վարձատրության չափը սահմանվում են սույն օրենքի հավելված 1-ով եւ հավելված 2-ով:

10. Բյուջետային գրասենյակը կազմված է համակարգող փորձագետից եւ 4 այլ փորձագետներից: Փորձագետների՝ տվյալ ժամանակահատվածի աշխատանքային ստաժը հավասարեցվում է Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության բարձրագույն պաշտոնների 2-րդ ենթախմբում պաշտոն զբաղեցնելու ստաժին:

Հոդված 3. Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ կետում «ներկա գտնվել» բառերից հետո լրացնել «Բյուջետային գրասենյակի փորձագետները,» բառերը:

Հոդված 4. Օրենքի 30.1. հոդվածի՝

1. Վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝ «Հանձնաժողովի եւ Բյուջետային գրասենյակի հարցումները»:

2. 1-ին կետում «եւ այլ հարցերի վերաբերյալ» բառերից հետո լրացնել «, իսկ Բյուջետային գրասենյակը՝ իր գործառույթների իրականացման նպատակով,» բառերով.

3. 1-ին կետի ա) ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«ա) 20-օրյա ժամկետում քննարկել գրավոր հարցումը եւ գրավոր պատասխանել դիմողին»:

Հոդված 5. Օրենքի 79-րդ հոդվածի՝

1. 3-րդ կետում «եւ Վերահսկիչ պալատ» բառերը փոխարինել «, Վերահսկիչ պալատ եւ Բյուջետային գրասենյակ» բառերով.

2. 3-րդ կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Պետական բյուջեի նախագիծը ստանալուց հետո Բյուջետային գրասենյակը 10-օրյա ժամկետում պատրաստում եւ Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովին է

ներկայացնում պետական բյուջեի նախագծի ամփոփ նկարագիրը, որը հանձնաժողովի նախագահը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին:»:

Հոդված 6. Օրենքի 80-րդ հոդվածի 4-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ «ե» ենթակետով.

«ե) ընդունված առաջարկությունը, ըստ ծախսերի բյուջետային դասակարգման համապատասխան հոդվածի եւ բյուջեի նախագծի աղյուսակի համարի.»:

Հոդված 7. Օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկումը վերսկսվելուց առնվազն 24 ժամ առաջ Կառավարությունը բյուջեի մասին օրենքի նախագծի վերջնական տարբերակը եւ սույն օրենքի 80-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով կազմված ամփոփաթերթիկը, պատգամավորների թվին համապատասխան ու եւս մեկ օրինակ Բյուջետային գրասենյակի համար, հանձնում է Աշխատակազմ, որն ապահովում է դրանց տրամադրումը պատգամավորներին եւ Բյուջետային գրասենյակին Ազգային ժողովի նստավայրում:»:

Հոդված 8. Օրենքի 86-րդ հոդվածում՝

2-րդ կետում «ներկայացնում» բառից հետո լրացնել «(նաեւ էլեկտրոնային տարբերակով)» բառերը.

2-րդ կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2.1 կետով՝

«2.1. Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովն իր նիստում քննարկում է բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքը:

Հանձնաժողովի նիստում քննարկումներն իրականացվում են հետեւյալ ընթացակարգով՝

ա) հիմնական զեկուցողի ելույթը.

բ) հարցեր հիմնական զեկուցողին.

գ) հարակից զեկուցողի ելույթը.

դ) հարցեր հարակից զեկուցողին.

ե) մտքերի փոխանակություն.

Քննարկումներն ավարտվում են հարակից եւ հիմնական զեկուցողների եզրափակիչ ելույթներով:»:

Հոդված 9. Օրենքի 87-րդ հոդվածի՝

1. 3-րդ կետում «եւ Վերահսկիչ պալատ» բառերը փոխարինել «, Վերահսկիչ պալատ եւ Բյուջետային գրասենյակ» բառերով.

2. 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«4. Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ստանալուց հետո Բյուջետային գրասենյակը 10-օրյա ժամկետում պատրաստում եւ Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովին է ներկայացնում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ամփոփ նկարագիրը, որը հանձնաժողովի նախագահը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին:»:

Հոդված 10. Օրենքի 101-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 7-րդ եւ 8-րդ կետերով՝

«7. Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովն ուսումնասիրում է վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվությունները եւ եզրակացությունները, ինչպես նաեւ վերահսկվող օբյեկտի պաշտոնատար անձանց կողմից ընթացիկ հաշվետվություններում եւ եզրակացություններում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ տրամադրված գրավոր տեղեկատվությունները: Ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը, դրանք քննարկելու համար կարող է որոշում կայացնել հրավիրել՝

ա) հանձնաժողովի նիստ,

բ) հանձնաժողովների համատեղ նիստ՝ համապատասխան ոլորտային հանձնաժողովի հետ:

8. Հանձնաժողովի կամ հանձնաժողովների համատեղ նիստերում հարցերի քննարկումը տեղի է ունենում հետևյալ հաջորդականությամբ՝

ա) վերահսկիչ պալատի ներկայացուցչի ելույթ,

բ) հարցեր վերահսկիչ պալատի ներկայացուցչին եւ նրա պատասխանները,

գ) վերահսկվող օբյեկտի պաշտոնատար անձի ելույթ,

դ) հարցեր վերահսկվող օբյեկտի պաշտոնատար անձին եւ նրա պատասխանները:

Քննարկումներն ավարտվում են մտքերի փոխանակությամբ:»:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված 1
«Ազգային ժողովի կանոնակարգ»
«Օրենքի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

(ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ)

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են փորձագետների աշխատանքային խմբի (Բյուջետային գրասենյակի) «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Ազգային ժողովի կանոնակարգ) 23-րդ հոդվածով սահմանված գործունեության նպատակի եւ գործառույթների իրականացման կազմակերպումը, դրանց կատարման ժամկետները, գործավարությունը եւ պատգամավորների, մշտական հանձնաժողովների, խմբակցությունների, պատգամավորական խմբերի ու Ազգային ժողովի աշխատակազմի հետ փոխգործակցության կարգը եւ պայմանները:
2. Բյուջետային գրասենյակն Ազգային ժողովի կանոնակարգի 23-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված գործառույթների շրջանակներում՝ Ազգային ժողովի կանոնակարգով եւ սույն կանոնակարգով սահմանված դեպքերում եւ ընթացակարգերով, պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին, պատգամավորական խմբերին տրամադրում է մասնագիտական աջակցություն եւ տեղեկատվություն:
3. Բյուջետային գրասենյակն իր գործառույթներն իրականացնելիս օգտվում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների պաշտոնական փաստաթղթերից եւ տեղեկատվությունից:
4. Իր գործառույթներն իրականացնելիս Բյուջետային գրասենյակն ինքնավար է եւ անկախ է պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար եւ այլ անձանցից: Բյուջետային գրասենյակն իր գործունեությունն իրականացնում է իրեն վերաբերելի իրավական ակտերին համապատասխան:
5. Բյուջետային գրասենյակի գործունեության ընդհանուր համակարգումը, այդ թվում՝ ներքին աշխատակարգի սահմանումն իրականացնում է Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովը:
6. Բյուջետային գրասենյակի փորձագետների աշխատանքի անմիջական համակարգումը, կազմակերպումը եւ վերահսկումն իրականացնում է Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետը, որը պատասխանատու է Բյուջետային գրասենյակի գործառույթների պատշաճ իրականացման համար:
7. Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետը եւ մյուս փորձագետներն իրենց աշխատանքային գործունեությունն իրականացնում են Ազգային ժողովի աշխատակազմի եւ իրենց միջեւ կնքված աշխատանքային պայմանագրերի պայմաններին համապատասխան:
8. Սույն կանոնակարգով սահմանված ժամկետներում պատգամավորների, մշտական հանձնաժողովների, խմբակցությունների, պատգամավորական խմբերի հարցումների հիման վրա տեղեկանքներ, նկարագրեր, տեղեկատվություն կամ աջակցություն անհարգելի պատճառով չտրամադրելը, չցուցաբերելը, ուշացնելը, կամ ոչ հավաստի կամ ոչ լրիվ տրամադրելը, հիմք է կարգազանց փորձագետին աշխատանքային կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:
9. Բյուջետային գրասենյակի աշխատանքային պայմանները, նյութական, տեխնիկական, գործավարական, կազմակերպական, տեղեկատվական, ծրագրային անհրաժեշտ աջակցությունն ապահովում է Ազգային ժողովի աշխատակազմը:
10. Բյուջետային գրասենյակի պաշտոնական լրիվ անվանումն է՝ փորձագետների աշխատանքային խումբ, իսկ կրճատ՝ Բյուջետային գրասենյակ:
11. Բյուջետային գրասենյակն Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում ունի իր ինտերնետային էջը:
12. Բյուջետային գրասենյակի գտնվելու վայրն է՝ քաղաք Երեւան, Մարշալ Բաղրամյան պողոտա 19:

ԳԼՈՒԽ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

13. Ազգային ժողովի կանոնակարգի 7-րդ հոդվածի 1-ի կետի «բ» ենթակետով եւ 30.1.-րդ հոդվածով սահմանված Բյուջետային գրասենյակի լիազորություններն իրականացնում է համակարգող փորձագետը կամ նրան փոխարինող փորձագետը :

14. Բյուջետային գրասենյակն Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովին է ներկայացնում՝

1) պետական բյուջեի նախագծի եւ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ամփոփ նկարագրերը,

2) պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագիրը:

15. Բյուջետային գրասենյակը պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին եւ պատգամավորական խմբերին՝

1) տրամադրում է՝

ա. տեղեկանքներ պետական բյուջեի նախագծում, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում բյուջետային մուտքերը եւ ելքերը ծրագրային եւ/ կամ այլ ձեւաչափով ներկայացված փաստաթղթի վերաբերյալ,

բ. պետական բյուջեի նախագծի ճյուղային, ծրագրային, ոլորտային ամփոփ նկարագրեր եւ տեղեկանքներ,

գ. տեղեկանքներ ներպետական բյուջեի եկամուտների (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների), ինչպես նաեւ պետական բյուջեով հատկացվող, հատկացված միջոցների (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների) ծախսման վերաբերյալ,

դ. տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության պետական պարտքի, Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի, այդ թվում՝ պետական բյուջեի վրա վարկերի սպասարկման ազդեցության եւ Հայաստանի Հանրապետությանն օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաեւ այլ անձանց կողմից տրամադրված դրամաշնորհների վերաբերյալ,

ե. պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ճյուղային, ծրագրային, ոլորտային ամփոփ նկարագրեր եւ տեղեկանքներ,

զ. տեղեկանքներ վերահսկիչ պալատի տարեկան, ընթացիկ հաշվետվությունների եւ եզրակացությունների վերաբերյալ,

է. այլ տեղեկատվություն պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ.

2) աջակցում է՝

ա. պետական բյուջեի նախագծում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունների ձեւակերպման գործում՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելով հաշվարկներ,

բ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ հարցերի, հարցումների եւ հարցապնդումների ձեւակերպման գործում:

16. Բյուջետային գրասենյակը պատգամավորների եւ մշտական հանձնաժողովների փորձագետների համար կազմակերպում է դասընթացներ՝ ծրագրային բյուջետավորման ձեւաչափի վերաբերյալ:

17. Բյուջետային գրասենյակն Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովին ներկայացնում է իր կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ եռամսյակային եւ տարեկան հաշվետվություններ: Տարեկան հաշվետվությունը տեղադրվում է Բյուջետային գրասենյակի ինտերնետային էջում:

18. Բյուջետային գրասենյակն իրականացնում է պետական բյուջեի կատարման, գանձապետական հաշիվների մշտադիտարկում, այդ թվում՝ առցանց, պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

19. Բյուջետային գրասենյակի փորձագետները կարող են ներկա գտնվել պետական բյուջեի նախագծի, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության եւ պետական բյուջեի կատարման

(եռամսյակային) ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի քննարկումներին՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կամ նրաց համատեղ նիստերին:

ԳԼՈՒԽ 3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ

20. Բյուջետային գրասենյակը սույն կանոնակարգի 14-րդ-րդ կետում նշված գործառույթներն իրականացնում է ինքնաշխատ՝ հետեւյալ ժամկետներում՝

1) սույն կանոնակարգի 14-րդ կետի 1-ին ենթակետում նշված ամփոփ նկարագրերը պատրաստվում են ներկայացվում են պետական բյուջեի նախագիծը եւ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ստանալուց հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ժամկետում,

2) սույն կանոնակարգի 14-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ամփոփ նկարագիրը՝ պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ժամկետում.

21. Բյուջետային գրասենյակը սույն կանոնակարգի 15-րդ կետում նշված գործառույթներն, իր մոտ առկա տեղեկատվության շրջանակներում, իրականացնում է պատգամավորների, մշտական հանձնաժողովների, խմբակցությունների, պատգամավորական խմբերի գրավոր հարցման առկայության դեպքում՝ հետեւյալ ժամկետներում՝

1) սույն կանոնակարգի 15-րդ կետի 1-ին ենթակետի «ա», «բ», «գ», «դ», «ե», «զ» եւ «է» պարբերություններում նշված գործառույթներն իրականացվում են համապատասխան հարցման ներկայացմանը հաջորդող 10 (տաս) աշխատանքային օրվա ժամկետում,

2) սույն կանոնակարգի 15-րդ կետի 2-րդ ենթակետի «ա», «բ» պարբերություններում նշված գործառույթներն իրականացվում են հարցումի ներկայացմանը հաջորդող 3 (երեք) աշխատանքային օրվա ժամկետում,

22. Սույն կանոնակարգի 16-րդ կետում նշված գործառույթն իրականացվում է առնվազն 10 պատգամավորի կամ մշտական հանձնաժողովների առնվազն 10 փորձագետի գրավոր հայտերի եւ անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում, ըստ Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցված ժամանակացույցի,

23. Սույն կանոնակարգի 17-րդ կետում նշված եռամսյակային հաշվետվությունները ներկայացվում են յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ տարեկան հաշվետվությունը՝ յուրաքանչյուր տարվա ավարտից հետո 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում: Տարեկան հաշվետվությունն Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովին ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է Բյուջետային գրասենյակի ինտերնետային էջում:

24. Բյուջետային գրասենյակ պատգամավորների, մշտական հանձնաժողովների, խմբակցությունների եւ պատգամավորական խմբերի հարցումը (այսուհետ՝ հարցում) ներկայացվում է գրավոր եւ պետք է պարունակի՝

1) հարցումը ներկայացնող մշտական հանձնաժողովի, խմբակցության կամ պատգամավորական խմբի լրիվ անվանումը, պատգամավորի դեպքում՝ նրա անուն, ազգանունը եւ պատգամավորական մանդատի համարը,

2) պետական կառավարման մարմնի անվանումը, որին Բյուջետային գրասենյակի միջոցով ներկայացվում է հարցումը (եթե այդպիսին ներկայացվում է),

3) հարցման բովանդակությունը (առարկան),

4) հարցումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են),

5) հարցումը ներկայացնողի (իրավասու անձի) ստորագրությունը,

6) հարցումը հանձնելու տարին, ամիսը եւ ամսաթիվը:

25. Հարցումը պատգամավորը կամ մշտական հանձնաժողովի, խմբակցության կամ պատգամավորական խմբի լիազորված անձը հանձնում է Ազգային ժողովի աշխատակազմի ընդհանուր բաժին, որը նույն օրն այն

փոխանցում է Բյուջետային գրասենյակ: Հարցումը պատգամավորը կամ մշտական հանձնաժողովի, խմբակցության կամ պատգամավորական խմբի լիազորված անձը կարող է էլեկտրոնային ստորագրության առկայության պարագայում Բյուջետային գրասենյակ ներկայացնել նաեւ էլեկտրոնային եղանակով:

26. Հարցման պատասխանը տրվում է գրավոր՝ Ազգային ժողովի աշխատակազմի ընդհանուր բաժնի միջոցով: Հարցումը ներկայացնողի պահանջով հարցման պատասխանը տրամադրվում է նաեւ էլեկտրոնային փոստի միջոցով:

27. Բյուջետային գրասենյակը հարցման պատասխանը կամ մասնագիտական աջակցությունը տրամադրում է ըստ հարցումների ստացման հաջորդականության՝ պատասխանը կամ մասնագիտական աջակցությունը տրամադրելու պատրաստ լինելուն պես, բայց ոչ ուշ, քան սույն հավելվածի 21-րդ կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերում նշված ժամկետների, եթե հարցումը ներկայացնողը մինչեւ իրեն պատասխանը ուղարկելը չի հրաժարվում իր հարցմանը պատասխանելուց կամ մասնագիտական աջակցությունից: Ընդ որում, եթե հարցումները ներկայացվում են միաժամանակ, ապա նախ բավարարվում է ընդհանրապես պատգամավորի, խմբակցության հարցումը:

28. Հարցման պատասխանը տրամադրվում է միայն հարցումը ներկայացնողին: Համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող պատասխանները Բյուջետային գրասենյակը տվյալ հարցումը ներկայացնողի համաձայնությամբ կարող է տեղադրել Բյուջետային գրասենյակի ինտերնետային էջում:

29. Եթե հարցման առարկան չի մտնում Բյուջետային գրասենյակի կամ հարցումում նշված պետական կառավարման մարմնի իրավասության մեջ, ապա Բյուջետային գրասենյակը հարցումը եւ դրան կից փաստաթղթերը, հարցումը ստանալուց հետո՝ երկօրյա ժամկետում, վերադարձնում է հարցումը ներկայացնողին՝ նշելով վերադարձնելու պատճառը:

30. Եթե հարցումը կատարելու համար Բյուջետային գրասենյակի տնօրինության տակ առկա տեղեկատվության հիման վրա հնարավոր չէ կամ մասնակի է հնարավոր կատարել եւ/կամ հայցվող տեղեկատվությունը ստանալու նպատակով անհրաժեշտ է դիմել տվյալ տեղեկատվությունը տնօրինող պետական կառավարման մարմին, ապա Բյուջետային գրասենյակը հարցումը ներկայացնողի համաձայնությամբ՝

1) հնարավորինս սեղմ ժամկետում հավաքագրում է պակասող տեղեկատվությունն ու տրամադրում է հայցվող տեղեկատվությունն ամբողջ ծավալով, կամ

2) իր մոտ առկա տեղեկատվության հիման վրա սահմանված ժամկետում տրամադրում է հայցվող տեղեկատվության առկա մասը՝ նշելով տեղեկատվությունն ամբողջությամբ չտրամադրելու պատճառները:

31. Հրատապ անհրաժեշտության դեպքերում հարցումը կարող է ներկայացվել բանավոր: Հրատապ անհրաժեշտության դեպքերն են՝

1) մշտական հանձնաժողովների եւ դրանց համատեղ նիստերում պետական բյուջեի նախագծի նախնական քննարկումների ընթացքը,

2) Ազգային ժողովի նիստում բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկումների ընթացքը,

3) պետական բյուջեի նախագծի քննարկումն ընդմիջելուց հետո՝ 24 ժամվա ընթացքը,

4) պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության նախնական քննարկումների ընթացքը,

5) Ազգային ժողովի նիստում բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկումների ընթացքը:

32. Հրատապ հարցում ներկայացրած պատգամավորը կամ մշտական հանձնաժողովի, խմբակցության, պատգամավորական խմբի լիազորված անձը իր նախաձեռնությամբ՝ կարող է Բյուջետային գրասենյակում ծանոթանալ անհրաժեշտ տեղեկությանը կամ բանավոր կարգով ստանալ մասնագիտական աջակցություն: Բյուջետային գրասենյակում հարցվող տեղեկությանը ծանոթանալու եւ/կամ բանավոր կարգով մասնագիտական աջակցություն ստանալու փաստը գրանցվում է Բյուջետային գրասենյակի համապատասխան մատյանում:

33. Բյուջետային գրասենյակում ներքին գործավարությունը կազմակերպվում է իրականացվում է Ազգային ժողովում սահմանված գաղտնի եւ ոչ գաղտնի գործավարության, այդ թվում՝ էլեկտրոնային, կարգին համապատասխան:
34. Բյուջետային գրասենյակի ներքին գործավարության կազմակերպման պատասխանատուն Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետն է:
35. Բյուջետային գրասենյակի ներքին գործավարումն իրականացնում է Բյուջետային գրասենյակի ներքին աշխատակարգին համաձայն:
36. Բյուջետային գրասենյակում հարցումը ստացված է համարվում Բյուջետային գրասենյակի մտից մատյանում գրանցվելու պահից:
37. Բյուջետային գրասենյակի միջոցով պետական կառավարման մարմիններ ուղարկված կամ հետ վերադարձված հարցումի պատճենները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ դրանց կից փաստաթղթերի պատճենները հաշվառվում է պահվում են Բյուջետային գրասենյակում:
38. Բյուջետային գրասենյակն ունի իր անվանմամբ ձեռագրեր եւ անհատականացման այլ միջոցներ:

Հավելված 2
«Ազգային ժողովի կանոնակարգ»
«Օրենքի

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ, ՆՐԱՆՑ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ԿԱՐԳԻ ՈՒ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետը եւ մյուս փորձագետներն աշխատանքի են ընդունվում սույն հավելվածով սահմանված կարգով՝ որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրով՝ մինչեւ տվյալ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտը:
2. Բյուջետային գրասենյակի փորձագետների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, Ազգային ժողովի կանոնակարգով, ինչպես նաեւ աշխատանքային հարաբերությունները կարգավորող նրանց վերաբերելի այլ իրավական ակտերով:
3. Բյուջետային գրասենյակի կատարած աշխատանքների վերաբերյալ եռամսյակային եւ տարեկան հաշվետվություններն Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովում քննարկելու արդյունքներով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված այլ դեպքերում եւ կարգով, հանձնաժողովի որոշման հիման վրա հանձնաժողովի նախագահը միջնորդություն է ներկայացնում Ազգային ժողովի նախագահին՝ միջնորդությունում նշված Բյուջետային գրասենյակի փորձագետի հետ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը վաղաժամկետ լուծելու կամ նրա նկատմամբ համապատասխան աշխատանքային կարգապահական տույժ կիրառելու մասին: Ազգային ժողովի նախագահը բավարար իրավական հիմքերի առկայության դեպքում՝ հանձնարարում է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարին Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով միակողմանի լուծել աշխատակազմի եւ տվյալ փորձագետի միջեւ կնքված աշխատանքային պայմանագիրը կամ նրա նկատմամբ կիրառել համապատասխան աշխատանքային կարգապահական տույժ:

4. Բյուջետային գրասենյակի փորձագետների հաստիքները ներառվում են Ազգային ժողովի աշխատակազմի հաստիքացուցակում:

5. Բյուջետային գրասենյակի փորձագետի պաշտոնի նկարագիրը Բյուջետային գրասենյակի փորձագետի համար Ազգային ժողովի կանոնակարգ եւ Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Ազգային ժողովի որոշումներով, Ազգային ժողովի նախագահի որոշումներով եւ կարգադրություններով նախատեսված պաշտոնեական իրավունքները, պարտականությունները նկարագրող, տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները, ինչպես նաեւ աշխատանքային ստաժի, որակավորման եւ փորձի չափանիշները սահմանող փաստաթուղթ է: Փորձագետի պաշտոնի նկարագիրը հանդիսանում է նրա հետ կնքվելիք աշխատանքային պայմանագրի բաղկացուցիչ մաս:

6. Բյուջետային գրասենյակի փորձագետների պաշտոնների նկարագրերը Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ հաստատում է Ազգային ժողովի նախագահը:

7. Բյուջետային գրասենյակի փորձագետների աշխատանքային գործունեության ընթացքն արտացոլվում է նրանց անձնական գործերում, որոնք վարում է Ազգային ժողովի աշխատակազմի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը:

ԳԼՈՒԽ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Բյուջետային գրասենյակի փորձագետի պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն սույն հավելվածով եւ տվյալ պաշտոնի նկարագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

9. Բյուջետային գրասենյակի փորձագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար համապատասխան պաշտոնի հավակնորդին մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների տիրապետման, աշխատանքային ստաժի եւ փորձի տեսանկյունից, ի թիվս սույն հավելվածի եւ տվյալ պաշտոնի նկարագրի պահանջների, ներկայացվող պահանջներն են՝

1) Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետ՝

ա. Բարձրագույն կրթություն տնտեսագիտության, հանրային ֆինանսների, հաշվապահական հաշվառման, հանրային կառավարման ոլորտում,

բ. 7 (յոթ) եւ ավելի տարվա աշխատանքային փորձ պետական կառավարման մարմիններում եւ/ կամ միջազգային կազմակերպություններում՝ հանրային ֆինանսների կառավարման, հաշվապահության, աուդիտի կամ տնտեսագիտական հետազոտությունների ոլորտում, որից առնվազն 5 (հինգ) տարին պետական բյուջեի կամ ՀՀ քաղաքային համայնքների համայնքային բյուջեների նախագծման, կատարման կամ վերահսկողության ոլորտում,

գ. Ծրագրային բյուջետավորման իմացություն,

դ. Առնվազն մեկ օտար լեզվի տիրապետում:

2) Փորձագետներ՝

ա. Բարձրագույն կրթություն տնտեսագիտության, հանրային ֆինանսների, հաշվապահական հաշվառման, հանրային կառավարման ոլորտում,

բ. 5 (հինգ) եւ ավելի տարվա աշխատանքային փորձ պետական կառավարման մարմիններում եւ/ կամ միջազգային կազմակերպություններում՝ հանրային ֆինանսների կառավարման, հաշվապահության, աուդիտի կամ տնտեսագիտական հետազոտությունների ոլորտում, որից առնվազն 3 (երեք) տարին պետական բյուջեի կամ ՀՀ քաղաքային համայնքների համայնքային բյուջեների նախագծման, կատարման կամ վերահսկողության ոլորտում,

գ. Ծրագրային բյուջետավորման իմացություն,

դ. Առնվազն մեկ օտար լեզվի տիրապետում:

10. Բյուջետային գրասենյակի փորձագետի պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը բյուջետային գրասենյակում պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը: Այդ հիվանդությունների ցանկը նույնական է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած հանրային ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկին,

3) դատապարտվել է հանցագործության համար, եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

4) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն,

5) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

ԳԼՈՒԽ 3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ԿԱՐԳԸ

11. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի առաջին մասի հիմքով Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետի եւ մյուս փորձագետների թափուր պաշտոնները զբաղեցվում են մրցութային կարգով քննություններ հանձնելու արդյունքներով:

12. Բյուջետային գրասենյակում թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթը կազմակերպվում է անցկացվում է Ազգային ժողովի նախագահի սահմանած կարգով հիմք ընդունելով սույն հավելվածով սահմանված իրավակարգավորումները:

13. Բյուջետային գրասենյակում թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմում, իրենց ցանկությամբ, ընդգրկվում են նաեւ Ազգային ժողովի խմբակցությունների, պատգամավորական խմբերի ներկայացուցիչները: Խմբակցության, պատգամավորական խմբի ներկայացուցիչները մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համապատասխանաբար խմբակցության, պատգամավորական խմբի ներկայացմամբ:

14. Բյուջետային գրասենյակի փորձագետի թափուր պաշտոն առաջանալու դեպքում Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովի նախագահը եռօրյա ժամկետում գրավոր առաջարկություն է ներկայացնում Ազգային ժողովի նախագահին՝ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու վերաբերյալ:

15. Մրցույթի թեստերի եւ հարցազրույցի հարցաշարերը, ներառյալ ենթադրյալ եւ ճիշտ պատասխանները, կազմում է Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովի քարտուղարությունը:

ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ

16. Բյուջետային գրասենյակի համակարգող փորձագետը վարձատրվում է պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի յոթապատիկի չափով, իսկ փորձագետը՝ վեցապատիկի չափով:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-646՝-21.10.2014-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հողված 1. Հայաստանի Հանրապետության 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետեւ՝ օրենք) 23-րդ հոդվածի 6-րդ մասում «տեղեկատվություն» բառից հետո լրացնել «(նաեւ էլեկտրոնային տարբերակով)» բառերը:

Հողված 2. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետում «եռամյա» բառը փոխարինել «քառամյա» բառով:

Հողված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-646²-21.10.2014-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հողված 1. Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-4-Ն «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետեւ՝ օրենք) 19-րդ հոդվածի 9-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Վերահսկողության արդյունքում ընթացիկ հաշվետվության կազմումը եւ վերահսկիչ պալատի կողմից դրա հաստատումը կատարվում է վերահսկողության ավարտից հետո մեկամսյա ժամկետում:»:

Հողված 2. Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասին գ) կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝

«Տվյալ տեղեկատվությունը ստանալուց հետո եռօրյա ժամկետում վերահսկիչ պալատն այն տրամադրում է Ազգային ժողովին:»:

Հողված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

««

»

», ««

»

» ««

»

»

()

77

77-

(

)

:

:

:

:

:

:

(4000)

77-

()

3 :

, (:

):

(
)

:

:

4

17

12.7

, 2007 .

135

:

: 1975

8

235

:

1.

NN	/	/	
1.			4 EUR 0.322 .
2.			5
3.			7
4.			9 AUD 4.0 AUD 3.0 .
5.			10
6.		6	5 SEK 7.55 . (USD 1.14 .)
7.		12 (30-35) AUD 6.083 .

8.		15 + 2	CAD 2.8 .
9.	-	100-200 ,	EUR 2.0 . ()
10.		135	USD 12.7 .
11.		235	

2.

NN		
1.		,
2.		
3.) (, ,	, , , , ,
4.		, , , , ,
5.	,	, , , , ,
6.		, , , , ,
7.	,	, , , , ,
8.		, , , , ,
9.	,) ()	, , , , ,
10.		, , , , ,
11.	-	, , , , ,

2-

(

), «

»

:

77-

«

»

10- , 11-

101-

5

4

:

(

N1

):

:

)

;

)

;

)

:

(

)

:

« »

1-

10-

:

2-

«

»

23-

()

:

•

;

•

().

1.

2.

3.

2-

NN			NN
----	--	--	----

1		3-	
2		,	/
3	(,	,	,
4	,	,	
5	,	,	
6),	()
7	,	,	
8		,	

9	(,)	, , ()	
10		,	
11	- , ,	: :	

3. , ,
() , ,
4. , 4
:
3-
:
4-
:
5-

:

6-

,

,

:

7-

:

8-

()

:

9-

:

10-

:

«

»

»

1-

2-

()

, () ,

, : ,

() (

) « »

18-

.2)

86-

:

«

»

1-

:

2-

:

«

»

1-

:

2-

: